«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Լ. Օհանյան

Ուսումնական հաստատություն՝ Գեղարքունիքի մարզ, Գավառի համար 2 մ/դ

Երևան 2022

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Վերապատրաստվող ուսուցիչ՝ Լուսինե Օհանյան

ԳԱՎԱՌ - 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

1. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԿԱՄ ՆՐԱ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ 6

1.1 ԴՊՐՈՑ-ԾՆՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ 9

2. ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 12

2.1 ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԸ 14

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 15

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սովորական ուսուցիչը պատմում է։

Լավ ուսուցիչը բացատրում է։

Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս։

Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է։

Ուիլյամ Ուորդ

«Ինչու ես ատեմ երեխային այսօրվա վատի համար, ես Նրան կսիրեմ այն լավի համար, ինչը նրա մեջ դաստիարակելու եմ վաղը։

Վ. Ա. Սուխոմլինսկի

Դեռևս հին ժամանակներից երեխաների դաստիարակության գործում առաջնությունը տրվում էր ուսուցիչներին՝ անտեսելով սովորողի ընտանեկան կրթական միջավայրի առանձնահատկությունները։ Այժմ, երբ երեխայի հետ փոխգործակցության օպտիմալ մոդելը ուղղված է անձին, ուսումնական հաստատությունում կրթական ծրագրերը պետք է իրականացվեն հաշվի առնելով սովորողի անհատականությունը։ Իսկ, ինչպես հայտնի է, անհատականությունը ձևավորվում է ընտանիքում, քանի որ երեխան իր ժամանակի մեծ մասն անցկացնում է ընտանիքում, և նրա զարգացման վրա մեծ ազդեցություն ունի ընտանեկան միջավայրը։ Շատ հաճախ կարելի է կարծիք լսել, որ ամեն ինչ ընտանիքից է գալիս։ Սա իսկապես այդպես է։ հիմնական բնավորության գծերը կամ գենետիկորեն դրված են, կամ ձևավորվում են ծնողների ազդեցության տակ մանկության տարիներին։Բայց դա չի նվազեցնում դպրոցի դերը անհատի ձևավորման և դաստիարակության գործում։ Այն սերմերը, որոնք ցանվել են ծնողների կողմից, կարող են հավասարապես սատկել կամ բողբոջել դպրոցական միջավայրում դասարանի թիմի,

ուսուցիչների և դասղեկի ազդեցության տակ։ Այդ իսկ պատճառով պետք է իրականացնել համագործակցություն ուսուցչի, սովորողի ընտանիքի հետ։ Եվ այդ համագործակցությունը գնալով դառնում է ավելի արդիական և պահանջված։ Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը իրենից ներկայացնում է նպատակաուղղված և երկարատև աշխատանք, որն էլ իր հերթին ենթադրում է գործողությունների մի ամբողջական համակարգ՝ ուղղված սովորողի կրթական կարիքների ու պահանջմունքների վերլուծությանն ու բարելավմանը։ Ուսուցչի և սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ համագործակցությունը պետք է իրականացվի հաշվի առնելով բարձր մարդկային որակները, էթիկայի նորմերը։

Եվ ինչպես ասել է ռուս մեծ ուսուցիչ Սուխոմլինսկին.« Ընտանիքում արմատներ են գցվում, որոնցից հետո աճում են ճյուղեր, ծաղիկներ ն պտուղներ։ Դպրոցի մանկավարժական իմաստությունը կառուցված է ընտանիքի բարոյական առողջության վրա։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն հետազոտության արդիականության համար հիմք է հանդիսացել կյանքի մարտահրավերներով լի ժամամանակակից շրաջափուլում սովորողի կրթական կարիքների ապահովման շրջանակներում ծնող-ուսուցիչ հաստատուն կապի անհրաժեշտությունը, որն ունակ է մեծապես ազդել սովորողի ուսումնառության որակի բարձրացման վրա։ Մեծաքանակ աշակերտներով դասարաններում ժամանակի սղության պատճառով հնարավոր չի լինում անհրաժեշտ ուշադրություն դարձնել, բավարար բոպեներ տրամադրել այս կամ այն աշակերտի գիտելիքների հիմնովին ստուգմանը անկախ նրա առաջադիմությունից, ակտիվությունից ն այլնից...

Այստեղ է, որ առաջին պլան է մղվում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և , գոնե, դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով։

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

- Կապ ստեղծել դպրոցի սովորողի և ծնողի միջև :

- Ներգրավել ծնողին դպրոցական գործընթացին, համագործակցել ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման ժամանակ, ներգրավել դասարանական, համադպրոցական, արտադասարանական միջոցառումներին:
- Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության ն կրթության համար:
- Ցույց տալ ծնող-ուսուցիչ արդյունավետ փոխգործակցության դրական ազդեցությունը սովորողի կրթության ու դաստիարակության գործընթացում:

1. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԾՆՈՂԻ ԿԱՄ ՆՐԱ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ

Հին դպրոցական աֆորիզմում ասվում է.«Երեխաների հետ աշխատելիս ամենադժվարը նրանց ծնողների հետ աշխատելն է:

Ընտանիքը, որպես կրթական կոլեկտիվ, ունի մի շարք առանձնահատկություններ: Առաջին հերթին այն կոլեկտիվ է միավորված ոչ միայն ընդհանուր նպատակով, այլև ազգակցական կապերով: Ծնողական զգացմունքները, ծնողական սերը մի տեսակ կատալիզատոր են, որն արագացնում է անձի զարգացումը: Սա համեմատաբար կայուն թիմ է, որտեղ շփումը տեղի է ունենում անընդհատ, հնարավոր ամենալայն տարածքներում, տարրեր գործողություններում:

Ընտանիքում է դրվում և ապահովվում անհատականության կարևորագույն գծերի դաստիարակությունը: Դրանում սովորողը ստանում է աշխարհի մասին առաջին պատկերացումները, այստեղ ձևավորվում է հասկացությունների, հայացքների զգացմունքների , սովորությունների ֆոնդը, որն ընկած է անհատի բարոյական ձևավորման հիմքում: Միայն ընտանիքում է հնարավոր ստեղծել և վերարտադրել իսկապես ազգակցական հարաբերությունների մշակույթ, տիրապետել սոցիալական կարևորագույն դերերին, ձևավորել մշակույթ, հարստացնել բարոյական փորձը:

Ընտանիքը կոչված է ապահովելու երեխայի կյանքի ողջամիտ կազմակերպումը, օգնելու յուրացնել ավագ սերունդների կյանքի և աշխատանքի դրական փորձը, կուտակել գործունեության, սովորությունների, հարաբերությունների արժեքավոր անհատական փորձ:

Ծնողների հետ փոխգործակցությունը դպրոցի և յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքում հրատապ և բարդ խնդիրներից է։

Ընտանիքները շատ տարբեր են, յուրաքանչյուրն ունի իր խնդիրներն ու դժվարությունները, ուստի հնարավոր չէ պատրաստի և միակ ճիշտ պատասխանը տալ այն հարցին, թե ինչպես շփվել ընտանիքի հետ։ */Վ.Դ.Սեմյոնով/*

Շատ բան կախված է ուսուցչի ինտուիցիայից, հմտությունից, ով պետք է վերլուծի տարբեր հանգամանքների համալիրը, որպեսզի ճիշտ որոշում կայացնի որոշակի իրավիճակում ծնողների և սովորողի հետ շփվելու մեթոդների և միջոցների ընտրության հարցում։

Ծնող-ուսուցիչ կապի պահպանումը ուսումնական գործընթացում աշակերտի հաջողության բանալին է, իսկ ծնողների և դպրոցի միջև կապի բացակայությունը, ինչպես նաև դպրոցի ու ծնողների չհամաձայնեցված գործողությունները վնասում են երեխայի կրթությանն ու դաստիարակությանը։

Երկկողմանի համագործակցության շնորհիվ կարելի է սովորողի համար ապահովել այնպիսի կրթական միջավայր, որտեղ վերջինս իրեն կզգա պաշտպանված ու կարևոր։

Ծնող-ուսուցիչ համագործակցությունն իր դրական ազդեցությունն է ունենում սովորողի առաջադիմության, արժեհամակարգի ձևավորման, հաջողություններ և հաղթանակներ ունենալու վրա։

Ծնողների և ընտանիքների ներգրավումը իրենց երեխաների կրթության գործում արժեքավոր ներդրում է ցանկացած ծրագրի համար։ Ընտանիքին յուրաքանչյուր երեխայի կրթության իմաստալից մասը դարձնելու համար ուսուցիչը պետք է.

- ծնողներին և ընտանիքներին դիտի որպես գործընկերներ
- կանոնավոր կերպով հաղորդակցվի նրանց հետ
- հրավիրի ընտանիքներին՝ իրենց մասնակցությունը բերելու ծրագրին
- ընդլայնի աջակցությունը ընտանիքներին՝ տնային պայմաններում ուսմանը նպաստելու նպատակով
- աջակցի ընտանիքներին ռեսուրսներից և ծառայություններից օգտվելու հարցում. */«Քայլ առ քայլ–ի չափորոշիչների կիրառումը դասարաններում/։*[1]

1. [1] Ամիրջանյան «Մանկավարժությունե, Եր. 2003թ, 135էջ

Արդյունքում սովորողը միշտ կլինի ուշադրության կենտրոնում, կլինի կառավարելի և որոշակի խնդիրների առկայության դեպքում հեշտությամբ կլուծի իր առջև ծառացած խնդիրները: Ուսուցիչը կարող է նաև համագործակցության արդյունքում օգնել սովորողի ծնողին ցանկացած կոնֆլիկտային իրավիճակներում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ սովորողները ավելի լավ են իրենց դրսևորում դպրոցում, երբ նրանց ծնողը կամ խնամակալը ներգրավված է ուսումնական գործընթացին:

«Ծնողների ներգրավվածություն՝» տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի առաջադիմության բարելավմանը: Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր առաջադիմություն, այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, սովորողի մոտ զարգանում են սոցիալական շատ կարևոր հմտություններ, և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը , այնպես էլ դպրոցում: Սրանք շատ կարևոր գործոններ են , որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում: Ծնողները տեղեկացված են լինում իրենց երեխաների կրթական կարիքների մասին և խրախուսում են ներգրավվելը:

Ծնող-դպրոց կապը ավելի կամրապնդվի, եթե հաճախակի հրավիրվեն ծնողական ժողովներ, կազմակերպվեն հանդիպումներ, խորհրդատվություններ, տարբեր հետաքրքրաշարժ միջոցառումներ: Այդ կապը էլ ավելի կզարգացնենք, եթե օգտագործենք ժամանակակից տեխնոլոգիաներ: Օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները /համակարգիչ, հեռախոս/՝ կարելի է ծնողների հետ քննարկումները կատարել հեռավար: Տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս երեխայի կրթական կարիքների և ուսման առաջաղիամության կամ կարգապահական խնդիրների մասին տեղեկանալ ավելի շուտ:

Ուսուցիչն, օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները, կարող է աշակերտի առաջընթացի մասին հաշվետվություն ուղարկել տուն շաբաթական կամ ամսեկան մի քանի անգամ: Միացման այս ձևը ծնողներին տալիս է սովորողի ուսումնական առաջընթացի շոշափելի վկայություններ:

1.1 ԴՊՐՈՑ-ԾՆՈՂ Հ ԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի մասնակից են համարվում սովորողը, սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը և ուսուցիչը: Վերջիններիս իրավունքներն ու պարտավորությունները սահմանված են օրենքով: Ուսուցչը ուսումնական գործընթացի հիմնական կազմակերպիչն ու իրականացնողն է, որ մեծագույն պատասխանատվություն է կրում սովորողի չափորոշչային վերջնարդյունքներին հասնելու համար: Սակայն այս տեսակետից շատ կարևոր է նաև սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի պատասխանատու վերաբերմունքը կրթական գործընթացին, վերջինիս կողմից ուսուցչի հետ համագործակցելու, սովորողին վերահսկելու ու առաջնորդելու գործառույթը: Սովորողի կրթական կարիքների հետազոտման, նրա լավագույն որակների և հատկությունների բացահայտման ու զարգացման հարցերում դպրոցի և ընտանիքի փոխներգործության հիմքում պետք է դրված լինեն ընդհանուր հետաքրքրություններն ու նպատակները: Այդ փոխհարաբերությունների հիմքում պետք է դրվեն միմյանց նկատմամբ վստահության, փոխադարձ հարգանքի, փոխօգնության և օժանդակության, համբերատարության սկզբունքները:

Նման միջավայրի ապահովումը կարող է խթանել ուսուցիչի աշխատանքի արդյունավետությունը, քանի որ ծնողների հետ համատեղ ջանքերով կարելի է հասնել սովորողի՝ ինքնորոշման, ինքնակառավարման, խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ կարողունակությունների անցնցում ձևավորմանը: Սովորողին, ծնողներին և ուսուցիչներին պետք է միավորեն ընդհանուր մտահոգություններ, խնդիրներ, նպատակներ ու դրանց հասնելու լուծումներ, եղանակներ: «Սովորողի ծնողն իրավունք ունի համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով:

Դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երկարատև ու բարդ գործընթաց է, որի հիմքում պետք է դրված լինեն մի շարք սկզբունքներ, որոնց թվում են.

- Փոխադարձ հարգանքը ծնող-ուսուցիչ հարաբերություններում;
- Առողջ բարոյահոգեբանական միջավայրը;
- Ընդհանուր շահի շուրջ բանակցելու, ելքեր գտնելու կարողությունը;

- Արդյունավետ հետադարձ կապի մեխանիզմների գործարկումը;
- Մշտադիտարկումը;
- Սխալների ընդունումը, վերլուծությունը, թերի կողմերի արձանագրումը;
- Ինքնանդրադարձ կատարելու կարողությունը;
- Հումանիստական մղումները;
- Սեփական շահի ստորադասումը;
- Անձնային բարձր որակների դրսևորումը։

Այս երկու օղակների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվի պլանավորված ու համակարգված ձևով։ Ծնողները և ուսուցիչները պատասխանատվություն են կրում միևնույն սովորողի կրթության ու դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմներն ու դրանց լուծման ուղիները։ Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորող հանգամանքներից են ծնողների իմացական կարողությունները, հայացքներն ու դիրքորոշումները։ Շատ կարևոր է նաև ծնողի կողմից ազնիվ ու անվերապահ մոտեցումն ուսուցչին, դպրոցին։

Երբ ծնողը ներգրավված է զավակի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ։ Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները, և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում։ Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում։

Ուսումնական գործընթացին ծնողների ներգրավվածությունը մեծապես կարող է պայմանավորել սովորողների հաջողությունը։ Անկախ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ծնողի կրթության աստիճանից՝ վերջինիս ներգրավվածությունը սովորողի կրթության գործընթացին անփոխարինելի կարելի է համարել սովորողի զարգացման վրա թողած ազդեցության առումով։ Այն սովորողները, ում ծնողներն ավելի բաց են համագործակցության համար, հաճախակի են հետաքրքրվում իրենց երեխաների

վարքով ու առաջադիմությամբ, ավելի են մոտիվացվում: Արդյունքում, նրանք դառնում են ավելի պատասխանատու, բարձրանում է աշխատունակության մակարդակը և ունենում են հաջողություններ: Անշուշտ, ծնողների ներգրավվածությունը դպրոցի, դասարանի սովորողի դպրոցական կյանքին դրական է անդրադառնում նաև կրթական հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը նպաստում է վերջիններիս հետ բարեկամական հարաբերությունների հաստատմանը՝ ստեղծելով բարոյահոգեբանական կայուն միջավայր:

Այսուհանդերձ, այս համագործակցության շրջանակներում հնարավոր են նաև կոնֆլիկտներ, անհամաձայնություններ, որոնք կարող են վնաս բերել բուն ուսումնական գործընթացին, մտցնել լարվածություն: Ուստի շատ կարևոր է երկուստեք պահպանել բարեվարքության կանոնները, լսել խնդիրն ու բերել հիմնավոր փաստարկներ, չառաջնորդվել բացառապես սեփական շահով:

Դպրոցում տարբեր կոնֆլիկտների զանազան պատճառներ կան, բայց որքան էլ տարօրինակ թվա, կարող է նման իրավիճակ ստեղծվել սովորողի և ուսուցչի միջև:

Ի վերջո, դպրոցում երեխաները խաղում են, հաճախ չեն ենթարկվում, երբեմն էլ հրաժարվում են դասին մասնակցելուց: Ուսուցիչը, իհարկե, դիտողություն է անում, փորձում ինչ-որ կերպ ազդել՝ արդյունքում ծնողին հրավիրելով դպրոց: Այս պարագայում եթե ծնողը փոխըմբռնում չի գտնում ուսուցչի հետ, ապա դա կարող է բացասաբար անդրադառնալ հենց սովորողի վրա վրա: Արդյունքում ստեղծվում է ուսուցիչ-սովորող-ծնող կոնֆլիկտ: Ուստի ցանկացած պարագայում բախումը սովորողի և ուսուցչի միջև անթույլատրելի է, հարկավոր է միշտ պահպանել էթիկայի կանոններն ու իմանալ սեփական իրավունքներն ու պարտականությունները:[2]

Այսպիսով, վստահաբար կարող ենք ասել, որ կրթական համակարգում ավելի լավ արդյունքների հասնելու, սովորողների կրթության ու դաստիարակության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու համար դպրոցը և ռաուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցությամբ: Իսկ ծնողները, առաջնային համարելով սեփական երեխայի լավ ու որակյալ կրթությունը, պետք է մշտապես

2. [2] Ամիրջանյան «Մանկավարժություն, Եր. 2003թ

համագործակցեն դպրոցի մանկավարժական աշխատողների, այլ սովորողների ծնողների հետ:

2. ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հաջողված է այն դասարանը, որի ղեկավարը հաճախակի հրավիրում է ծնողական ժողովներ, ներկայացնում է սովորողների առաջընթացի մասին, քննարկում սովորողի հետ կապված ցանկացած հիմնախնդիր:

Ծնողական ժողովները մերձեցնում են ուսուցիչներին և ծնողներին, ընտանիքին մոտեցնում են դպրոցին, օգնում որոշել երեխայի կրթության վրա ազդելու ամենաօպտիմալ ուղիները: Հանդիպումների ժամանակ ծնողները համակարգված կերպով ծանոթանում են ընտանիքում և դպրոցում երեխաներին դաստիարակելու խնդիրներին, բովանդակությանը, ձևերին և մեթոդներին: Ծնողական ժողովները կարող են կառուցվել տարբեր ձևերով:

Շատ հաճախ ուսուցչի կամ ծնողի սխալ խոսելը, ոչ ճիշտ վարվելակերպը երեխաներին հետ է շպրտում և ստեղծվում է կոնֆլիկտային իրավիճակ, որն ավելի բարդացնում է ծնող-երեխա–մանակավարժ-դպրոց համագործակցությունը: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է ճիշտ ծնողական ժողովներ վարել, որտեղ կկարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել, և համատեղ աշխատանքի արդյունքում կշահի մեր սովորողը, վաղվա քաղաքացին: Ծնողական ժողովները պետք է կազմակերպել հետևյալ սկզբունքներով՝

- ժողովների ժամանակ որոշել մեկ առավել կարևոր խնդիր, որը վերաբերում է դասարանի աշակերտներին և դրա հիման վրա կազմակերպել զրույցը ծնողների հետ:

- հատուկ ուշադրություն դարձնել դասարանում ծնողների աթոռների դասավորության վրա։ Օրինակ , կարելի է սեղանները և աթոռները դասավորել շրջանաձև, որպեսզի բոլոր ծնողները լավ տեսնեն և լսեն միմյանց։
- ժողովի ընթացքում կիրառել խաղեր և ծնողների համագործակցության կազմակերպման խմբային ձևեր։
- Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հենվել առավել կենսափորձ ունեցող ծնողների կյանքի և մանկավարժական փորձի, ծնողական կոմիտեի անդամների և դպրոցի խորհրդի կարծիքների վրա։ /Կ. *Դ. Ուշինսկի/*

Ծնողական ժողովների ժամանակ դասղեկը պետք է դրսևորի հետևյալ վարքագիծը.

- Հանել սեփական լարվածությունը և տագնապը ծնողներին հանդիպելուց առաջ։
- Խոսքի, ինտոնացիայի, ժեստերի և այլ միջոցներով ցույց տալ հարգանք և ուշադրություն նրանց հանդեպ։
- Փորձել հասկանալ ծնողներին, ճիշտ որոշել խնդիրները, որոնք առավել անհանգստացնում են նրանց։
- Ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր խոսել։ Կարևոր է, որ բոլոր աշակերտների, այդ թվում /ռիսկային խմբի/ ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան։
- Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա։

Եվ վերջապես ուսուցչի վարպետության արդյունք են աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը՝ առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը։ Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված։ Ռաուցիչն է, որ ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին, կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ։ /Կ. *Դ. Ուշինսկի/*

Ինչպես ասել է Սուխումլինսկին. «Յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը, և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա։

2.1 ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՊԱՏԱԿԸ

Ծնողների հետ մշտական կապի մեջ լինելու, հնարավոր խնդիրները, դասարանում առկա կազմակերպչական հարցերը քննարկելու համար դասարանի ղեկավարը սահմանված կարգի համաձայն պետք է անցկացնի ծնողների հետ ընդհանրական հանդիպումներ՝ ծնողական ժողովներ: Սա այն հարթակն է, որտեղ թե՛ ուսուցիչը, թե սովորողի ծնողը՝ հայրը, մայրը, օրինական ներկայացուցիչը, ունեն հնարավորություն ուղիղ հաղորդակցման: Ծնողական ժողովը ծնողների հետ աշխատանքի հիմնական ձևն է, որի միջոցով լուծվում են դասարանական ժողովների ժամանակ առաջացած խնդիրները, քննարկվում են սովորողների հնարավոր վարքային, կրթական և այլ բնույթի հարցերը: Ժողովի ժամանակ էական նշանակություն ունի ուսուցիչների շփման ոճն ու նպատակը: Ժողովի ընթացքն արձանագրվում է, ըստ անհրաժեշտության՝ կարելի է կազմակերպել արտահերթ ծնողական ժողովներ:[3]

Ուսուցիչը նախ և առաջ ծնողի համար ներկայացնում է առկա խնդիրը կամ իրավիճակը, խոսում դրա հնարավոր դրական ու բացասական ենթատեքստի ու զարգացման հնարավոր սցենարների, հետևանքների մասին: Այստեղ կարևոր է ծնողական համայնքի արձագանքը, հետադարձ կապ ստեղծելու կարողությունը: Շատ կարևոր է, որ ծնողն ընդունի և՛ դրական, և՛ բացասական կամ քննադատողական դիտարկումները:

[3] Կոմենսկի Յա.Ա.,Մեծ դիդակտիկա, Երևան ,1962, 125էջ

Շատ հաճախ՝ վերջին դիտարկումների պարագայում, ծնողները ցուցաբերում են անհավասարակշիռ ու պաշտպանողական վարքագիծ: Մինչդեռ, շատ կարևոր է արձանագրել խնդիրը, դնել այն քննարկման, որպեսզի դրան հետևի լուծումներ գտնելու հնարավոր հիմնախնդիրներն ու բացթողումները շտկելու փուլը: Կարևոր է, որ ծնողն այս պարագայում լինի հավասարակշռված, հասկանա խնդրի բուն էությունը, դրանից բխող հետևանքներն ու հնարավոր վտանգները: Այս առումով անկյունաքարային է ուսուցչի մոտեցումը:

Բացառապես քաղաքավարի, մանկավարժական էթիկայի կանոնների պահպանմամբ պետք է տեղի ունենա ուսուցիչ-ծնողական համայնք շփումն ու համագործակցությունը: Լարվածությունը, կոնֆլիկտների անկառավարելիությունը, անշուշտ, այս գործընթացում տեղ չունեն: Կողմերը երկուստեք պետք է գիտակցեն, որ քննարկումն ու բացասական կողմերի մատնանշումն ուղղված է ոչ թե իրենց իրավունքների կամ արժանապատվության ոտնահարմանը, այլ հիմնախնդրի բարձրաձայնմանն ու հնարավոր լուծումներ գտնելուն:

3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Տարիների աշխատանքային փորձը ցույց է տվել, որ տարրական դպրոցում ծնողները ավելի են ներգրավված ուսումնական գործընթացին, հաճախակի ինքնակամ այցելում են դպրոց, դպրոց-ծնող–ուսուցիչ կապն ավելի ամրապնդված է, քան միջին և ավագ դպրոցներում: Միջին և ավագ դպրոցներում ներգրավվածությունը մեծացնելու համար Պապին Ղանդիլյանի անվան Գավառի թիվ 2 միջնակարգ դպրոցը մշակեց հատուկ ռազմավարություն, որը ծնողին կապեց դպրոցի հետ:

Ռազմավարությունը հետևյալն է. հանձնարարվեց միջին և ավագ դասարանների դասղեկներին կազմակերպել տարատեսակ բնույթի միջոցառումներ՝ ծնողների և սովորողների մասնակցությամբ/ կլինի դա կրթական, սպորտային, պարային և այլն/:

5–րդ դասարանի դասղեկը կազմակերպեց միջոցառում՝ «Առողջ ապրելակերպ թեմայով, որին մասնակցեին թե՛ ծնողները, թե՛ աշակերտները: Ծնողները մեծ ոգևորու-

թյամբ էին գալիս նախնական փորձերին, արտասանում էին, երեխաներին ցույց էին տալիս և բացատրում էին ինչպես լվանալ ձեռքերը և ատամները։

6-րդ դասարանի աշակերտները իրենց ծնողների հետ միասին բեմադրեցին Հովհաննես Թումանյանի «Շունն ու կատուն»։ Այնքան լավ էր ստացվել, որ մանկապարտեզի տնօրինությունը ցանկություն հայտնեց, որ այդ բեմադրությունը ներկայացնեն նաև մանկապարտեզի երեխաների համար։

7-րդ դասարանում կազմակերպվեց սպորտլանդիա, որտեղ աշակերտները մրցում էին ընդդեմ իրենց ծնողների։ Հաղթող թիմը պարգևատրվեց շնորհակալագրով։

8-րդ դասարանի տղաները ծնողների օգնությամբ դպրոցի խոհանոցում պատրաստեցին քաղցրաբլիթներ և հյուրասիրեցին բոլորին։ Շատ գեղեցիկ և համեղ էր ստացվել ամեն ինչ։ Տղաները իրենց մայրիկների ներկայությունից շատ էին ոգնորվել։ Լավագույն քաղցրաբլիթ պատրաստող սովորողը և իր ծնողը պարգևատրվեցին շնորհակալագրով։

9-րդ և 10-րդ դասարանի աշակերտների և ծնողների մասնակցությամբ անցկացվեց գրական ցերեկույթ՝ նվիրված Համո Սահյանին, որի ժամանակ ծնողները և աշակերտները մեծ ոգևորությամբ արտասանում և երգում էին Սահյանի ստեղծագործությունները;

11-րդ դասարանի ծնողները և աշակերտները ներկայացրին ժողովրդական պարեր /նրանք յուրաքանչյուր դասամիջոցին ներկայացնում էին մի պար/։

12-րդ դասարանին հանձնարարություն չկար, քանի որ պատրաստվում էին ընդունելության քննություններին։

Այս ամենը կարճ նկարագրվեց, բայց նշեմ, որ վերջնական արդյունքին հասնելու համար պահանջվեց բավականին երկար ժամանակ՝ մոտ երկու ամիս։ Այսինքն, այդ ամենը միաժամանակ չի իրականացվել, այլ՝ հերթականությամբ։ Այդ երկու ամսում դպրոցում տիրում էր ոգևորություն, խանդավառություն, բոլորը շտապում էին իրենց հանձարարա-կանները կատարել։ Նշեմ նաև, որ սկզբում ծնողները կաշկանդված էին , բայց այնուհետև հաղթահարեցին այդ կաշկանդվածությունը, սկսեցին մեծ ոգևորությամբ և առանց կաշկանդվելու ներկայացնել այն, ինչ իրենց հանձնարարված էր։ Ուզում եմ ծնողների արտահայտած մտքերից մի քանիսը մեջբերել.

- Շատ նոր գիտելիքներ , հմտություններ սովորեցինք։
- Շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք դասղեկին, ավելի շատ տեղեկացանք նրա և դպրոցի պահանջների մասին։

- Ճանաչեցինք մեր երեխաներին նորովի, քանի որ երբեմն դասղեկը ինչ որ հատկանիշ է ներկայացնում և մենք զարմանում ենք, որովհետև այդ հատկանիշը տանը երեխան չի դրսևորել։
- Ծնողներս նաև իրար հետ շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք միմյանց։
- Երգելիս, պարելիս, արտասանելիս, սպորտային խաղեր խաղալիս մտովի տեղափոխ-վեցինք մանկություն։
- Կուզենայինք այս ծրագիրը շարունակական լիներ։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ելնելով մեր դպրոցի իրականացրած ծնող-դպրոց համագործակցությունից, վերանայելով արդյունքները , կատարեցինք դիտարկումներ, որոնք կներկայցնենք ստորև.

- Համագործակցությունը հաջողված էր և դրական ազդեցություն ունեցավ սովորողների անհատականության և կրթական ուսումնառության վրա։
- Ուսուցչի, սովորողի ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի համագործակ-ցությունը բավականին պատասխանատու և կարևոր գործընթաց է։ Կողմերը պետք է քաջ գիտակցեն, որ իրենց համագործակցության հիմքում կրթության առաջնային շահերի՝ սովորողների սովորելու իրավունքի իրականացումն է։
- Կողմերի համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա։ Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները։
- Հարկավոր է հաճախակի ծնողական ժողովներ իրականացնել, որպեսզի մշտադիտարկենք կրթական հնարավոր խնդիրներն ու սովորողների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքային շեղումներն ու գտնենք միասնական լուծման տարբերակներ։

- Հարկավոր է մյուս սովորողների ծնողների մեջ ևս ստեղծել բարոյահոգեբանական կայուն ու առողջ միջավայր, որպեսզի հնարավոր լինի խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից։
- Կարևոր հանգամանք է նաև մանկավարժական խորհրդատվությունը ծնողին։
- Ուսուցիչն իր նեղ մասնագիտական գիտելիքներով ու փորձառությամբ ցանակալի է , որ կիսվի ծնողների հետ։
- Կարևոր պայման է փոխադարձ հարգանքն ու այն գիտակցումը, որ կողմերի արդյունավետ աշխատանքն ուղիղ համեմատական է արժեքային համակարգ ունեցող, դաստիարակված ու գիտակից անձնավորության ձևավորմանը։
- Մենք պետք է փորձենք ծնողներին վստահություն տալ, որ որակյալ ուսուցիչները կսովորեցնեն և կկրթեն իրենց որդուն կամ դստերը, և որ դրա համար կան բոլոր անհրաժեշտ պայմանները։

Ուսուցիչներն ու ծնողներն ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ : Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք։ Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը։ Ընտանիքում ձևավորվում և մշակվում է մարդկանց կարեկցելու կարողությունը։

Ընտանիքի և դպրոցի համագործակցությունը գնալով ավելի արդիական և պահանջված է դառնում։ Ծնողները բացառիկ դեր են խաղում երեխայի կյանքում, նրանք են կրում նրա զարգացման հիմնական պատասխանատվությունը։ Ընտանիքը պետք է լինի համախոհների խումբ և գործի դպրոցի հետ համատեղ։ Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց -ընտանիք համագործակցությունը։

Հետազոտական աշխատանքը ցանկանում եմ ավարտել հետևյալ խոսքերով .

«Մեր երեխաները մեր ծերությունն են։ Ճիշտ դաստիարակությունը մեր երջանիկ ծերությունն է վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները, դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև։

Ուրեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով դաստիարակել ու կերտել երկրի, ինչու չէ նաև աշխարհի ապագա պատմությունը:

Ա. Մ. Մակարենկո

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան «Մանկավարժությունե, Եր. 2003թ
2. Բաբանսկի “Դասի կատարելագործման պրոբելմները”, Եր., 1981
3. Ս. Մանուկյան “Նպատակահարույց ուսուցման տեսությունն և պրակտիկան”, Եր., 1998
4. Լերներ Ի. Ուսուցման պրոցեսը և նրա օրինաչափությունները, Եր., 1982
5. Բաբանսկի Յու., Մանկավարժություն, 2-րդ հատոր, 1997:

6. Կոմենսկի Յա.Ա.,Մեծ դիդակտիկա, Երևան ,1962:
7. Амонашвили Ш. А. Размышления о гуманной педагогике. — М.: 1995 г.
8. 6. Лазарева В.С. Управление образованием на пороге новой эпохи/ 1995
9. Кузьмина Н. В. Методы исследования педагогической деятельности. 1970 г.
10. Кузьмина Н. В. Методы исследования педагогической деятельности. 1970 г